

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Շահգալոյանը

ք. Հրազդան

03.08.2011թ. ժամը 11.⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 59-ը /բացակայում էին Ֆանտան, Կաթնաղբյուր, Հատիս, Մայակովսկի, Սևաբերդ, Գեղաղիր, Զովունի, Պոռչյան համայնքների ղեկավարները/

-Վ.Բակլաջյան, Լ.Միքայելյան, Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ

-Մ.Գարեգինյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

-Գ.Բաղայան-ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության մարզի վարչության պետ

-Վ.Դավթյան-ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալության պետ

-Դ.Գևորգյան, Ե.Գասոյան, Թ.Հարությունյան, Գ.Գալստյան-ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ

ՆԻՍԻՆ ՆԵՐԿԱ ԷԻՆ՝

-ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս.Մնացականյանը և ծառայության աշխատակազմի ներկայացուցիչներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Մարդահամարի անցկացման նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

/զեկուցող՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս.Մնացականյան/

2.Մարզի համայնքների 2011թ. 1-ին կիսամյակի բյուջեների եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/

3.ՀՀ գեներային քաղաքականության 2011-2015թթ.. ռազմավարական ծրագրի, ընդդեմ գեներային բռնության 2011-2015թթ.. ազգային ծրագրի և կանանց հիմնահարցերի առումով առաջիկա անելիքների մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի բնութանի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Պերրոսյան/

4. Այլ հարցեր:

Համայնքների ղեկավարների աշխատակազմերի կանոնադրություններում պաշտպանության և քաղպաշտպանության բնագավառների գործառույթների ներառման մասին:

/ գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյան

ԼՍԵՑԻՆ՝

1.ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս.Մնացականյանի գեկուցումը:

Զեկուցման մեջ նա նշեց մարդահամարի կազմակերպման կարևորության և մեթոդաբանության մասին: Ներկայացրեց մարդահամարի անցկացման կարգը և կարևորեց հասցեային տնտեսության կարգավորման անհրաժեշտությունը:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս.Մնացականյանը պատասխանեց նաև համայնքների ղեկավարների կողմից քարծրացված հարցերին և տվեց համապատասխան պարզարանումներ:

ԱՌԱՋԱՐԿՎԵՅ՝

Համայնքների ղեկավարներին

Առաջիկայում համայնքներում տրամադրել համապատասխան աշխատանքային պայմաններով սենյակներ հաշվարարների և հսկիչների աշխատանքները սահմանված կարգով կազմակերպելու համար:

Ներկայացնել համայնքներում առավել բանիմաց և հեղինակություն ունեցող անձանց թեկնածությունները հաշվարարների պաշտոններում նշանակելու համար:

Քաղաքային և 5000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղական համայնքների ղեկավարներին՝

Մարդահամարի անցկացումը ավելի արդյունավետ դարձնելու համար կազմել բնակիչների հասցեների սխեմատիկ քարտեզ:

ԼՍԵՑԻՆ՝

2.ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի գեկուցումը մարզի համայնքների 2011թ. 1-ին կիսամյակի բյուջեների եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Տեղեկանքը կցվում է/:

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Պետրոսյանի զեկուցումը ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի, ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թթ. ազգային ծրագրի և կանանց հիմնահարցերի առումով առաջիկա անելիքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն /կցվում է/:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ՝


ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Պետրոսյանին՝

ՀՀ Կոտայքի մարզպետարանում ստեղծված մշտապես գործող գենդերային հանձնաժողովում լսել և քննարկել 2012 թ. գենդերային քաղաքականության և գենդերային բռնության ծրագրերի նախագծերը: Նախագծերը կազմելիս համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության, կրթության, մշակույթի և սպորտի վարչությունների ու ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինների հետ:

ԼՍԵՑԻՆ՝

4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հակոբյանի զեկուցումը համայնքների ղեկավարների աշխատակազմերի կանոնադրություններում պաշտպանության և քաղաքապետության ընագավառների գործառույթների ներառման մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն /կցվում է/:


Կ. ՇԱՀԳԱԼԳՅԱՆ